

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-ԻՑ 17-Ը ՔԱՂԱՔ ԼՅՈՒՐԼՅԱՆԱ (ՍԼՈՎԵՆԻԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը

Անի Սարիբեկյան՝ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության նախագծերի իրականացման բաժնի տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու:

Աննա Պողոսյան՝ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության Տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազդեցությունների գնահատման բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սլովենիա, քաղաք Լյուբլյանա, մայիսի 13-ից 17-ը

3. Հրավիրող կողմը՝

Հարավ-արևելյան Եվրոպայում ֆինանսական առաջավոր փորձի կենտրոն (Center of Excellence in Finance in the South East Europe / CEF) միջազգային կազմակերպությունը:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել Հարավ-արևելյան Եվրոպայում ֆինանսական առաջավոր փորձի կենտրոնի կողմից կազմակերպվող «Թվայնացումը և SS համակարգերը. Թվայնացման հետևանքով առաջացող հարկային մարտահրավերները» թեմայով դասընթացին:

5. Քննարկված թեմաները

Դասընթացի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները

- Դասընթացին մասնակից երկրների փորձը և առկա իրավիճակը հարկային համակարգերի թվայնացման գործընթացում և հիմնական մարտահրավերները,

- Հարկային համակարգերի ստեղծման համապատասխանությունը պահանջներին (compliance of design) և ամբողջական հայացք հարկմանը, հարկային ստուգումները,
- Ընդհանուր թվային բիզնես մոդելի ներկայացում,
- Ինտեգրված հարկային համակարգերի գաղափարի ներկայացում,
- Հարկային մարմնի կողմից ներդրվող համակարգերի ապագան, ինչպիսին կարող են լինել հարկային մարմնի համակարգերը ծառայությունների մատուցման տեսանկյունից ապագան էկոհամակարգում,
- OECD թվային հասունության մոդելի ներկայացում,
- Հինգ հատկանիշների վերլուծություն (FAA) մոդելի ներկայացում և կիրառում հարկային համակարգերի համար
- Հարկային հաշվարկ-հաշվետվությունների նախալրացման (pre-filling) արդյունավետությունն ու միտումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում շնորհանդեսներ են ներկայացվել Նիդերլանդների հարկային ծառայության ներկայացուցչի կողմից, ինչպես նաև միջազգային հարկային տեղեկատվական տեխնոլոգիաների և բիզնես մասնագետի կողմից: Իրենց կողմից մանրամասն ներկայացվել են 5-րդ կետում նշված թեմաները, ինչպես նաև քննարկումներ են իրականացվել մասնակից երկրների հետ (Մոլդովա, Բոսնիա և Հերցեգովինա, Մոնղոլիա, Ռումինիա, Մակեդոնիա, Հայաստան, Ալբանիա, Մոնտենեգրո, Կոսովո, Բուլղարիա, Վրաստան, Թուրքիա, Սերբիա, Խորվաթիա, Ուկրաինա): Մասնակից երկրների կողմից ներկայացվել են քննարկվող թեմաներին առնչվող հարցերը, իրենց երկրներում թվայնացման խաչընդոտները, իրենց փորձը հարկային համակարգերի թվայնացման հարցում:

Ներկայացվել են թվայնացման հիմնական հայեցակարգերը, մասնավորապես Վրաստանի և Էստոնիայի օրինակով:

Գործնական աշխատանք է իրականացվել մասնակիցների կողմից Հինգ հատկանիշների վերլուծություն (FAA) մոդելի կիրառմամբ՝ յուրաքանչյուր երկրի համակարգերի և թվայնացման գործիքների շրջանակներում:

Կարևորվել է հարկ վճարողների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, այդ տվյալների արդյունավետ կիրառումը և տվյալների ճշգրիտությունը:

Քննարկվել է հարկային ծառայությունների կողմից համակարգերի ստեղծման կարևորությունն օգտագործողի կողմից, այլ ոչ թե համակարգի ստեղծում հարկային մարմնի պահանջների կենտրոնացմամբ, ինչպես նաև հարկային համակարգի ինտեգրման հարցը երրորդ կողմերի հետ (օրինակ՝ հաշվապահական ծրագրեր և այլն):

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացը կրելու է շարունակական բնույթ, նախատեսվում է տարեկան կազմակերպել թվայնացմանն առնչվող հարցերի քննարկում և փորձի փոխանակում: Դասընթացի ընթացքում հաշվի են առնվել երկրների կողմից բարձրացված հարցերը և մասնագետների կողմից ներկայացվել են հնարավոր լուծումները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Դասընթացին մասնակցությունն ապահովեց թվայնացման շրջանակներում իրականացնել փորձի փոխանակում մասնակից երկրների հետ, ձեռք բերել նոր գիտելիքներ, ներկայացնել ՀՀ-ում կիրառվող գործիքները, օրակարգում ներառված հարցերի քննարկում, մասնավորապես միջազգային փորձը և թվայնացման ապագա ուղղությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Անի Սարիբեկյան

Աննա Պողոսյան



21.05.2024 թ.